

Ullage of ceiling

9 (47.925)
P - 64

1919

19 AUG 2000

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՑ ԱՀԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԴԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

1911 ապրիլ 5—1912 ապրիլ 5



Հ. Ա.
9304-56

ԹԻՖԼԻՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐ. Խ. Աղամեսի, պոտի, 7.

1912

85 SEP 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԱՔ

947.925

թ - 64

Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն Յանձնաժողովի մուտքի և ծախքի 1911 թուի ապրիլի 4-ից
մինչև 1912 թ. ապրիլի 4-ը

ՄՈՒՏՔ

1911 թուի ապրիլի 5-ն դրամարկով ուներ

1. առևտրական բանկում № 58,211	25000 — ր.
2. նոյնական ընթացիկ հաշուով, գրքոյլ № 3446	3557—50
3. Գանձապահի մօտ առաձեռն	460—24
	<hr/> 29017—74

1911 թ. ապրիլի 4-ից մինչև 1912 թ. ապրիլ 5-ը սացուել է

Առևտրական բանկից 25,000 ր. %	1185—85
Գրքերի վաճառումից	98—72
Ընթացիկ հաշուի առկու	<hr/> 101—94
	<hr/> 30404—25

Աղքատներին բաժանուեց	315—80 կ.
Ստեփաննոս Օբրէլեանի սրբագրութեան հաշուին և ցանկ կազմելու	112—
Ստ. Օբրէլեանը կազմելու կազմարարին	13—50
Ստ. Օբրէլեանի տպագրութեան մնացորդը	68—18
Թուղթ Յովհաննէս կաթողիկոսի համար	203—
Յովհ. կաթողիկոսի տպագրութեան վարձ	313—20
Յովհ. կաթողիկոսի սրբագրութեան և ցանկ կազմելու	140—
Թուղթ Սրբատակէս Լաստիվերացու համար	95—
Հոգեհանգստի համար յայտածարութեան վարձ	9—
Մանր ծախը	21—98
Օժտագրամ Մարիամ Մուրադեանին	100—
Օր. Սօֆիա Փէշտմալճեանի օժտագրամի փոխարէն թաղման վարձ	25—
Օժտագրամ Շուշանիկ Հայսպատելեանցին	100—
Լաստիվերացու տպագրութեան հաշուին	63—80

ԴՐԱՄԱՐԿՂ 1912 ապրիլի 5-ին

1580—46

1. Առևտրական բանկի տոմս № 61,092	25,000—
2. Նոյն բանկում ընթացիկ հաշուով գրքոյլ № 3446	3,810—29
3. Գանձապահի մօտ առաձեռն	13—50
	<hr/> 30,404—25

Գանձապահ Ն. Տէր-Յարութիւնեանց Յարոյ.

22 APR 2013

102 436 69

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՇԻԽԸ

1911 ապրիլի 3-ից մինչև 1912 ապրիլ 6-ը

1. ԵՂԻՃ

«Եղիշ»-ն ապուել է . . . 1185 օրինակ.

այս գրքերից մինչեւ այժմ՝	
Նուէր է տուած	37 օրինակ.
Գուտտեհմբ. գրատ. վաճառել է	780 »
Կենտրոնական » » 87 »	
Պահեստում » » 165 »	
	1069

Կենտրոնականում

Մնում է հրդեհից վկաս. գրքեր	113 օրինակ.
Թանգարանում մնում է . . . 3 »	
Ընդամենը	1185 օրինակ.

2. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Գրավաճառանոցներում և պահեստում կազմ 948 օր.

Վաճառուած	37 օրինակ.
Նուէր տուած.	5 »
Անվաճառ	906 »
Ընդամենը	948 »

3. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ

Գրավաճառանոցներում և պահեստում կազմ 1084 օր.

Վաճառուած	3 օրինակ.
Նուէր	2 »
Մնում է անվաճառ	1079 »
	1084

4. ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ

Տպարանից ստացուած 1185 օր.

Նուէր տուած	22 օրինակ.
Վաճառուած	15 »
Գրավաճառանոցներում և պահեստում	
1148 »	
	1185

5. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տպարանից ստացուած 1185 օր.

Նուէրներ տուած	4 օրինակ.
Գրավաճառանոցներում և պահեստում	
1181 »	
	1185 »

ՏԵՂԵԿԱԳԻՐ

370
2304-ՏԵ

ԹԻՖԼԻՍԻ

ՎԱՆԱՅ ԱԻԱԴ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

1911 ապրիլ 5—1912 ապրիլ 5

ԹԻՖԼԻՍ

ԽԼԵԲՏ. ՏԱՊԱՐԱՆԻ ՕՐ. Շ. ԱՊԱԲԵԿԱՆԻ, պօլից, 7.

1912

1911 ապրիլ—1912 ապրիլ 5

ՄԱՍՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

- ԱՆԴԱՄՆԵՐ**

 1. ԱՐՇԱԿ ԲԱԲԵԱՆ. Ժամանակ. նախագահ
 2. ԱՂԱՆԵԱՆ ԳԻՒԾ ա. քահ. Թանգարանի
կտոռավարիչ
 3. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍՍԱԿ
 4. ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ—ՅԱՐՈՅ ՆԻԿՈ-
ՂԱՅՈՍ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՆԱՑ ԱԼԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

1911 թուի ընթացքում «Ղուկասեան մըր-
ցանակաբաշխութեան» համար Յանձնաժողովս
ստացել է հետևեալ աշխատութիւնները.

№ 1. Թաթարները և 13-րդ դարի թաթա-
րական նուաճումները Հայաստանում, Վրաստա-
նում և Փոքր-Ասիական երկիրներում: (Հստ հայ
և օտար նախնական աղբիւրների): Ուսումնա-
սիրութիւն Գ. Ալթունեանի: Զեռագիր աշխա-
տութ.—108 մեծագիր փոստի թղթի էջ:

№ 2. Ժողովրդական բառերի բառարան՝
Հայկունու: Զեռագիր ընդարձակ աշխատութիւն,
սակայն անկատար. մէջ ընդ մէջ պակաս են
բազմաթիւ բառերի բացատրութիւններ:

№ 3. Պատմագիրք Հայոց, հատոր I, գիրք
Երկրորդ Ազաթանգեղոս. աշխատութեամբ Գ.
Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց. բաղդատու-
թեամբ ձեռագրաց. էջ 33+474+իթ. Տփխիս
1909թ.

№ 4. Աւոն Բաբայեան. Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում (պատկերազարդ) պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն. Էջ 226. Թիֆլիս 1911թ.

Այս աշխատութիւններից № 2-ը Յանձնաժողովս հնարաւոր չփառաւ մըցութեան ենթարկել իբրև թերի և անկատար աշխատութիւն:

Մնացածների մամին ցանկանալով իմանալ մասնագիտական պատրաստութիւն ունեցող անձանց կարծիքները, Յանձնաժողովս որոշեց ուղարկել հետևեալ անձանց՝ քննելու և իրենց պատճառաբանուած կարծիքը գրաւոր յայտնելու:

№ 1. Աշխատութիւնը՝ յանձնուեց քննութեան լեզուաբան պ. Մմբատ Տէր-Աւետիքեանին (Թիֆլիս):

№ 3. Աշխատութիւնն ուղարկուեց հայկաբան պ. Նորայր Բիւզանդացուն (Վենետիկ):

№ 4. Աշխատութիւնն ուղարկուեց Վիէննայի Միլիթարեան միարանութեան Աբբահայր գերապայծառ Հ. Գ. Գովրիկեանին:

Վերոյիշեալ անձանց քննադատութիւնները նշանակուած ժամանակին ստացուեցան: Յանձնաժողովս ապօնի 4-ի և 6-ի նիստերում ստացուած քննադատութիւնները կարդալուց, երկար խորհրդակցելուց՝ և խնդրը բազմակողմանի քննութեան ենթարկելուց յետոյ, ձայների մեծամասնութեամբ (անդամներից մէկը մաս-

նակցելով այդ հարցի վերաբերեալ բոլոր վիճակնութիւններին՝ խնդրի որոշման, սակայն, չը մասնակցեց, գտնելով մեծամասնութեան որոշումը իր հայեացքներին հակառակ) որոշեց այստարուայ մըցանակադրամ հինգ հարիւր սուբլին բաժանել յիշեալ երեք աշխատութիւնների մէջ այսպէս. — 1. 200 սուբլին տալ պ. Լւոն Բաբայեանցին, «Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում» աշխատութեան համար, 2. 150 սուբլին տալ պ. Գ. Ալթունեանցին «Թաթարները և 13-րդ դարի թաթարական նուաճումները Հայաստանում», Վրաստանում և Փոքրասիական երկիրներում» աշխատութեան համար և 3. 150 սուբլին տալ պ. պ. Գ. Տէր-Մկրտչեանին և Ս. Կանայեանին «Ագաթանգեղոս» գործի համար:

Հաշուետուութեան տարրուայ ընթացքում նախնեաց ընալիր մատենագիրներից յանձնաժողովս տպագրեց Ցովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Հայոց պատմութիւնը (Էջ ԺԹ. 427) և 30 կպ. գին նշանակեց. Մամուլի տակէ գտնուում Արխատակէս Լաստիվերտցու Հայոց պատմութիւնը. և որոշել է տպագրել Սեբէսոսի Պատմութիւն 'ի Հերակին:

Հայ չքաւոր օրիորդներին օժիտ տալու համար նախկին տարիների ձևով ներկայացրած վկայականներից կազմուեց 183 օրիորդների առուանացնկ և 1912թ. ապրիլի 6-ին վիճակն

ընկաւ հետևեալ երեք օրիորդներին. № 8 Մ. Գրիգորեան Մարիամ, № 101 Բօլնշեանց Աստղիկ և № 200 Տէր-Զաքարեան Աշխէն:

1912 թ. ծխատէր քոհանաների վկայութեամբ ներկայացած 307 չքաւորներին որոշուեց բաժանել ապրիլի 7-ին 200 բուբի՛ իւրաքանչիւրին 70 կոռլ.

Յանձնաժողովս ի նկատի ունենալով, որ «Ղուկասեան մրցանակի» արժանացած ձեռագիր աշխատութիւններից մի երկուսը ցայժմ անտիպ մնալով՝ անօգուտ են անցնում հայ հասարակութեան և գիտութեան համար, 1911 թ. հոկտեմբերի 25-ի նիստում միաձայն որոշեց, որ այսուհետեւ եթէ մրցանակի արժանանան ձեռագիր աշխատութիւններ, հեղինակներին պէտք է պարտաւորեցնել, որ իրենց մրցանակ ստացած աշխատութիւններն անպատճառ տպագրեն:

Ղուկասեան մրցանակի կանոնադրութեան Դ. գլխի 3-րդ կէտի իմաստով մրցանակի չեն կարող ներկայացուիլ «մի անգամ արդէն որևէ է ազգային հաստատութիւնից վարձատրուած երկեր»: Այս կէտը յանձնաժողովիս մէջ տարբեր տեսակէտներ առաջացրեց. ոմանք այնպէս էին ըմբոնում՝ թէ «վարձատրուած» բառը պէտք է հասկանալ «մրցանակ ստացած» իմաստով, իսկ ոմանք թէ՝ եթէ մի աշխատութիւն տպագրուած է մի հաստատութեան կամ մի բարերար անձի ծախ-

քով, նոյնպէս չի կարող մրցանակի ներկայացուիլ: 1910 թ. Յանձնաժողովս ձայների մեծամասնութեամբ ընդունեց երկրորդ տեսակէտը և այդ հիման վրայ մի քանի աշխատութիւններ մրցութեան չդրուեցան (տես Տեղեկագիր 1908—1910 թ.):

Այս տարի նոյն կէտը նորից քննութեան ենթարկելով՝ Յանձնաժողովս (որի կազմի մէջ փոփոխութիւն էր տեղի ունեցել) ընդունեց առաջին տեսակէտը:

Յանձնաժողովիս հրատարակած 1911 թ. տեղեկագրի հաշուեկշռի մէջ սպրդել է հետեւեալ սխալը. տպուած է. «Նոյն բանկում ընթացիկ հաշուով, գրքոյկ № 3446, 3557 ը. 50 կ. գանձապահի մօտ առձեռն 460 ը. 24 կ.»:

Պէտք է լինէր:

Նոյն բանկում ընթացիկ հաշուով, գրքոյկ № 3446. 3657 ը. 50 կ. գանձապահի մօտ առձեռն 360 ը. 24 կ.:

Դիեննա. 1912. մարտ. 12.

ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՆԱՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Ի Տփղիս:

Տփղիսի Թանգարանի Կրօնա-պատմական վարչութեան կողմանէ Մեղի յանձնուելով՝ որ Լ. Բարայեանի յօրինած և 1911-ին Տփղիսի մէջ տպուած «Հայերը Մոլղաւիայում և Բուքովինայում» երկասիրութիւնը քննութեան հնթարկեմ—կը յայտնամ մհծարանօք, թէ. Յիշեալ գործքը՝ լաւ մաչքէ անցընելէն ետեւ, այնպէս գտայ, որ աշխատասիրութիւնը հոգատարութեամբ ու հիմնովին գրուած ու հաւատարմութեամբ քովէ քով բերուած. և բաւական պատմական ճշտութեամբ քըննադատուած գործք մըն է:—Բնականապէս դուրս առնելու է կրօնական մասն. որուն նկատմամբ չի կը բնար հաստատութեամբ ըսուիլ, որ բոլորովին անկողմակալ հոգով քննուած ու գրուած է:

Եմ, Մհծար. Մն. Ժողովոյդ, մհծարանօք

Խ. Ճառայ
Գրիգոր վարդապետ. Գովրիկեանց
Արքեպիսկոպոս Մծրնայ,
Բնդէ. Արքայ Մխիթ. Միար.

«ԹԱԹԱՐՆԵՐԸ ԵՒ 13-ՐԴ ԴԱՐԻ ԹԱԹԱՐԱԿԱՆ ՆՈՒՅՆԱՌԻՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՓՈՔԸՐ-ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ»: Բայ հայ և օտարնախնական աղբիւրների): Ուսումնասիրութիւն Գ. Ալթունեանի»:

Պարոն Գէորգ Ալթունեանի այս ձեռագիր աշխատութիւնը թարգմանութիւն է Տերլինում 1911 թուին հրատարակած իւր գերմաներէն նոյն վերնագիրը կրող աշխատութեան և բաղկացած է հետեւալ մասերից.

«I Առաջարան» (1—3 էջ). այստեղ հեղինակը պարզում է իւր աշխատութեան նպատակը և ծրագիրը. պ. Ալթունեանի «Նպատակից դուրս է եղել այստեղ ուսումնասիրութեան նիւթ շինել մոնղոլական տիրապետութիւնը և մոնղոլների օրով Հայաստանում և հարեան երկրներում ստեղծուած հասարակական վիճակը. դա ի հարկէ մի յատուկ շարադրութեան համար շատ լաւ նիւթ կը լինէր և կարող էր մի շարք կարեոր հարցեր յառաջ քաշել ու լրացրանել, սակայն այս աշխատանքի ծրագրի մէջ դժբաղղաբար տեղ ըռնել չէ կարող» (Առաջարան 1—2): Եւ իրօք որ ընթերցողը սխալուած կը լինի, եթէ կարծի, որ ներկայ աշխատութեամբ կարելի է ծանօթանալ մոնղոլների տիրապետութեան շրջանի Հայոց, Վրաց և Փոքր-Ասիական երկրների պատմութեան հետ: Ներկայ ուսումնասիրութեամբ պ. Ալթունեանը աշխատել է պարզել թէ մոնղոլները ե՞րբ Հայաստան մտան և ի՞նչ կարգով նուաճեցին մեր երկրի զանազան մասերը: Իւր այս նպատակին համար հեղինակը օգտուել է մի շարք (57 անուն) աղբիւրներից (հայ և օտար), որոնց վերնագիրը յառաջ է բերած գրքի սկզբում «Պրակա-

նութիւն» վերնագրի տակ (4—9 էջ), որը կարելի է համարել ուսումնասիրութեան մի նոր մասը: Կամնեալով ըստ մեր կարողութեան բարեխղճութեամբ կատարել Դուկասեան մրցանակաբաշխութեան Մնայուն Վարչութեան մեր վերայ դրած պարտականութիւնը, ըսկըսեցինք ստուգել թէ ո՞ր չափով հեղինակը օգտուել է բոլոր իւր յիշած աղբիւրներից: Այդ աշխատութիւնների մի մասը ունէինք մեր սեպհական գրադարանում, մի քանի գիրք կարելի եղաւ գտնել Հայոց Ազգագրական ընկերութեան գրադարանում, բայց մի շարք աղբիւրներ չըկարողացանք Թիֆլիդում գտնել, ուստի և հնարաւորութիւն չունեցանք ստուգելու մեջ քննութեան ուղարկած ներկայ աշխատութեան այդ մասը: Գալով պ. Ալթունեանի յիշած աղբիւրների արժանաւորութեանը, պէտք է ասել, որ հեղինակը փոխարէն մի քանի տասնեակ հնացած աշխատութիւնների լաւ կանէր, եթէ օգտուէր մի երկու նոր արժէքաւոր ուսումնասիրութիւնից, ինչպէս օրինակ՝ Ստէնլի Լէն-Պուլ, Պոկտեմբով, և որ գլխաւորն է նշանաւոր արևելագէտ Պողոնէնի մոնղոլների կենցաղին և պատմութեանը նուիրած մի շարք գնահատելի աշխատութիւնները:

Թող ներուի մեղ նկատել նոյնպէս, որ հայերէն ուսումնասիրութեան մէջ անհրաժեշտ է պահել յատուկ անունների հայերէնում ընդունուած ձեզ, այս տեսակէտից հեղինակը լաւ կանէր եթէ փոխանակ Խվարազմ ձեի գործ ածէր կանոնաւոր Խորազմ ձեր, փոխանակ կասվին-ի Ղազվին և վերջապէս փոխ. Raschid-Eldin սխալ ընթերցանութեան կարդար Ռաշիդ Էդդին:

Մոնղոլներն անցնելուց առաջ իւր ներածութեամբ «ընդհանուր հայեացք միջնադարեան արևելեան պատմութեան վերայ» հեղինակը բաւական ճիշտ որոշելով սելջուկների դերը պատմութեան մէջ անցնում է Խո-

բազմ շահերին: Հեղինակի կարծիքով՝ իրը թէ սելջուկ-ների վերջին սուլթանը եղել է Տուղրիլ (ի հարկէ խօսքը այստեղ Տուղրիլ Ա-ի մասին է 1177—1194 թ.), որի գլուխը ընծայ է գնացել Խորազմի Տակաշ շահի կողմից արաբական Խալֆային: Հեղինակի այս տեղեկութիւնը պարզաբանութեան կարիք ունի. սխալ կը լինի Տուղրիլ Ա-ին սելջուկների վերջին սուլթան համարեւ որովհետեւ սելջուկների հարստութիւնը այս սուլթանով չի վերջացել, այլ շարունակուել է մինչև 1300 թիւը: Հեղինակի յիշած տեղեկութիւնները վերաբերում են մի միայն իրանի և Քուրդիստանի սելջուկներին, բայց ոչ սելջուկների հարստութեանը ընդհանրապէս: Ճիշտ չէ նոյնպէս, որ Տուղրիլի մահով Խորազմի շահը արևմտեան Ասիայի իսկական տէրն է գառնում, որովհետեւ դեռ նուաճուած չէին Փոքր-Ասիայի սելջուկները:

Ներածութեանը հետեւում է բուն աշխատութիւնը «Առաջին մասն. Մոնղոլների արշաւանքը»: Աշխատութեան այս բաժինը բաժանած է գլուխների. այդ կարգին էլ կը հետեւնք:

« 1 Թաթարական առաջապահը Հայաստանում և Վրաստանում (20—28 էջ): Կարգի դնելով հայ պատմագիրների տուած տեղեկութիւնները հեղինակը ըստ ամենայնի ճիշտ որոշում է այդ առաջապահի Հայաստան մտնելու ժամանակը 1220—1221 թ., նոցա կատարած դերը ու անցած ճանապարհը:

Երկրորդ գլուխը՝ «Մոնղոլները մինչև Զարմազանի գալը (29—33 էջ) ու Երբորդը՝ «Զարմազան և Հայաստանի ու Վրաստանի նուաճումը (34—44 էջ) ընդհանուր առմամբ կարելի է յաջող համարել: Հիւսիսային Հայաստանում մոնղոլների կատարած արշաւանքները սիստեմի տակ են դրուած: Այս նուաճում՝

ների ժամանակ յիշուող բերգերի տեղագրութեան համար ցանկալի էր, որ հնի փախարէն յիշուէին աւելի նորագոյն հնագէտ ճանապարհորդների աշխատութիւնները, ինչպէս օրինակ՝ հանգուցեալ Մակար եպ, Բարխուտարիանի «Արցախ», Սարգիս եպ, Հասան-Զալալեանի ճանապարհորդութիւնը և ե. Լալայիանի «Բորչալուի գաւառ» աշխատութիւնը: Պատմական տեսակէտից ճիշտ են նաև վերջին երկու գլուխը՝ «Բաչու և Փոքր-Ասիայի նուաճումը (45—51 էջ) ու «Հուլաւու Խան և Բաղդատի խալֆայութեան բարձումը (52—62 էջ):

Գրքի երկրորդ մասը՝ «Մոնղոլները» (64—103 էջ) պ. Ալթունեանի աշխատութեան գնահատելի մասն է. այստեղ նա իւր յիշած ազգիւրների հիման վերայ քըննութեան է առնում «մոնղոլների արտաքին տեսքը, սովորութիւնները և կենցաղավարութիւնը», խօսում է թաթարների կրօնի և կրօնական հասկացողութիւնների մասին», յիշում է «մոնղոլների ուազմագիտութիւնն ու տակտիկան», և ապա մէջ է բերում «կարգի վերահաստատումն ու հարկածանութիւնը»:

Այս մասում մոնղոլների արտաքին տեսքը, կենցաղը, սովորութիւնները նկարագրուած են այն չափով, որչափ տեղեկութիւն են հաղորդում հայ պատմիչները՝ Կիրակոս, Վանական, Օրբէլեան, Հեթում ու Մաղաքիա արեղանու նոցա տուած տեղեկութիւնները շատ անզամ մէկը միւսին հակասում են. այսպիսի գէպերում հեղինակը բաւականանում է միայն մէջ բերելով պատմագիրների վկայութիւնները առանց իւր կարծիքը յայտնելու, բնականաբար անհմուտ ընթերցողը պիտի դժուարանայ նախապատւութիւն տալ մէկի կամ միւսի վկայութիւններին: Կարծում ենք անհրաժեշտ էր, որ հեղինակը պարզէր այդ հակասութիւնները:

Ինչ վերաբերում է թաթարների կրօնին ու կրօնական հասկացողութիւններին, այստեղ հեղինակը բաւական ազդու փաստերով ջրում է մի ժամանակ տարածուած այն կարծիքը, որ մոնղոլները աւելի հակուած են դէպի քրիստոնէութիւն, Միանգամայն ճիշտ է պլ. Ալթունեանի նկատողութիւնը, որ մոնղոլների պէս զարգացման ստոր աստիճանի վերայ կանգնած մի ժողովուրդ իւր հասկացողութիւններով աւելի հակուած պէտք է լինէր դէպի մահմեդականութիւնը, ինչպէս որ իրօք վերջը տեղի ունեցաւ: Խիստ ցանկալի էր, որ հեղինակը յիշէր թէ ինչ էին հասկանում մոնղոլները, երբ քրիստոնեաներին անուանում էին արքաուն: Զէ որ այս մասին բաւականին նիւթ են տալիս հայ պատմիչները:

Ընթերցողին դիւրութիւն տալու նպատակով հեղինակը զրքի վերջում իրքն յաւելուած դրել է երկու աղիւսակ՝ 1. Մոնղոլական խաների և մեծ խաների ծննդարանական աղիւսակը ըստ հայկական աղքիւրների և 2. Մոնղոլների զօրապետները արևմուտքում: Եռաջին աղիւսակում Զաղատայի յաջորդը հեղինակը համարում է Ալղունին, այն ինչ Ալղունը այդ ցեղի հինգերորդ խանն է, իսկ երկորդը եղել է Ղարա-Հուլաղուն 1242 թ.:

Հուլաղուի ճիւզագրութիւնը նոյնպէս պէտք է ուղղել հետեւեալ կարգով.

1. Հուլաղու 1256թ.
2. Արագա 1265 »
3. Ահմեղ 1282 »
4. Արղուն 1284 »
5. Քէյխաղու 1291 »
6. Բայղու 1295 »
7. Ղաղան-Մահմուտ 1295 »



- | | |
|---------------|--------|
| 8. Ուղեյդա | 1334 |
| 9. Արու-Սէրիդ | 1336 » |
| 10. Արփա | 1335 » |
| 11. Մուսա | 1336 » |

Երկրորդ աղիւսակը պարունակում է միայն մեր տարեգիւների յիշած զօրապետների անունների ցանկը առանց թուելու նոցա գործերը, նոցա իշխանութեան ներքոյ գանուող երկրները և միմեանցից ունեցած կալումը:

Անցնելով պլ. Ալթունեանի աշխատութիւնը ընդհանուր գնահատութեանը պէտք է ասել, որ հեղինակը սորանով կամեցել է մեր պատմական գրականութեան պակասորդներից մինը լրացնել: Ինչքան մեզ յայտնի է, սա պրօֆ. Ք. Պատկանեանի աշխատութիւնից յետոյ առաջին կանոնաւոր փորձն է որոշելու մոնղոլների Հայաստան մուտք գործելու ժամանակը և նկարագրելու նոցա արշաւանքները:

Եթէ ընդունենք, որ հեղինակի ծրագրից գուրս է եղել մոնղոլների տիրապետութեան ժամանակի հայոց պատմութիւնը տալը, արդ գէպքում կարելի է ասել, որ պլ. Ալթունեանը որոշ չափով հասել է իւր նպատակին: Ընդհանուր թերութիւնը այն է, որ հեղինակը անցնում է համառօտ տալով գէպքերի ընդհանուր պատկերը, այն ինչ նա ձեռքի տակ ունեցել է բաւական հարուստ նիւթ որոշելու մոնղոլների անցած ճանապարհի Հայաստանում, նկարագրելու նոցա տիրապետած իշխանութիւնները և ամրութիւնները տալով այդ ժամանակի հայ իշխանութիւնների և երկրի վիճակը: Այսպիսով ուրեմն պլ. Ալթունեանը չի սպառել և պարզաբանել մոնղոլների արշաւանքների հետ կապուած մի շարք կարեւոր հարցեր, որոնց լուսաբանութիւնը աւելի կը պարզէր այդ պատմական շրջանը:

Բայց չը նայած այս բոլորին մենք այս աշխատութիւնը համարում ենք սկիզբը մի անհրաժեշտ ձեռնարկութեան և արժանի խրախուսանքի:

Պ. Ալթունեանին յաջողել է ի մի հաւաքել մոնղովների առաջին արշաւանքների և նոցա կենցաղին վերաբերեալ հայ պատմափիրների տուած տեղեկութիւնների մեծ մասը և կարգի տակ դնել:

Ամբար Տէր-Աւետիսեան:

1912թ. մարտի 3-ին.

BIBLIOGRAPHY

Պ. Նորայր Բիւզանդացին իբրև քննութիւն Ագաթանգեղոսի ուղարկել է մեզ Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու մասին վկննայի «Յուշարձան»-ի մէջ տպած իր քննադատութիւն արտատպութիւնը, որից քաղում հնք նրա տուած եզրակացութիւնները, թողնելով առաջ բերած բոյոր օրինակները:

Քննութիւն ՄԱԼԻԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱ-
ԿՈՒԹԵԱՆ ԱԳԱԹԱՆԴԵՂՋԱՍԻ

«Պատմագիրք Հայոց, վելնազբով Ստեփանոս Մալխասեանն հրատարակեց ի Տիգիս, նախ 1904-ին «Ղաղաքարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուրքի առ Ղահան Մամիկոնեան»։ Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան»։ Եւ յետոյ 1909-ին «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, բաղդատութեամբ Զենազբաց, բնդ վերակացութեամբ Ստ. Մահմասեանո»։

Սնմիստելի է որ երկու հատորներն ալ բազում առաւելութիւններ ունին իրենց նախորդներուն վրայ։ Սակայն նոյնպէս անմիտելի պէտք է համարուի՝ որ բնագիրներն զեռ մեծապէս կը կարօտին աւելի մտադրութեամբ ուսումնասիրուելու, աւելի մանր զննուելու, աւելի կշռադատութեամբ եւ հմտութեամբ յարգարուելու, եթէ աչք և միտք չեն բաւական սուր՝ տպէտ կամ անհաւատարիմ ընդօքինակողաց ակամայ և կամաւոր ամէն սխալները բռնելու և ուղղելու համար։ — Եթէ պակասաւոր է ընտրութեան գործն՝ որոշելու համար զնարազատն յանհարազատէն եւ զպատուականն ի խոտանէն։ — Եթէ անձուի է հրատարակչին գիտութեան

շրջանակն, —պարզապէս Զեռագրաց համեմատութեամբք
անհնար է որ հին բնագիրներ ընդունին իրենց
նախնական բնիկ ձեւն ու կերպարանքը, (կամ «վե-
րականգնուին», «վերակարգուին»), ինչպէս կ'ըսուի
այժմ սովորաբար): Կարելի է որ սրբագրուին այլեւայլ
աղաւաղութիւններ, բայց նոյնչափ կարելի է որ նո-
րանոր եւ մեծամեծ աղաւաղութիւններ յաջորդին սըր-
բագրուածներուն. մէկ կողմէն կը շինուի, միւս կող-
մէն կը քանդուի. կ'ելնենք ի Քարիբղիսէ, եւ կ'իյնանք
ի Սկիլլա: Հին բնագրաց Քննական Հրատարակու-
թինք կը սպահանջուին, եւ չեն Քննական ոչ Փար-
պեցւոյ չորրորդ տպագրութիւնն եւ ոչ Ազաթանգեղո-
սի վեցերորդն որ տրուեցան մեզ:

Կը սկսիմ յԱզաթանգեղոսէ, եւ կ'աւարտեմ Փար-
պեցւով:

Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.ԳԵՂՋՈՍ

Համառոտագրութիւնք. Զ, ԶԶ=Զեռագիր, Զեռա-
գիրք // ԶԱ=Զեռագիր Ա.գաթանգեղի զոր գրած է Ա.Ա-
րահամ Երէց ի թուին ՌՃՃԼ=1668 // Վ.Ա.=Երլորդ տը-
պագրութիւն Ազաթանգեղի, Վենետիկոյ Ռուզին, հրա-
տարակեալ ի Հ. Արանէ Բագրատունոյ, 1835 // Վ.Բ.=
Չորրորդ տպագրութիւն, Վենետիկոյ Երկրորդ, հրատա-
րակեալ ի նմին Բագրատունոյ, 1862 // Է=Հինգերորդ
տպագրութիւն, Տփղիս, 1883, ի ձեռն Հրատարակչա-
կան Ընկերութեան՝ որ առաջնորդ առած է զ' Վ.Բ// Տ=
Վեցերորդ տպագրութիւն, Տփղիս, 1909, հրատարա-
կութիւն Տէր-Մկրտչեան—Կանայեանց—Մալխասեանց:
Իմ են անկիւնաւոր փակագիծներու □ մէջ գրուած-
ներն:

Մատենիս նիւթական մասը շատ լաւ յօրինուած
է և արժանի գովեստի: Ընդարձակ Յառաջարան՝ յո-

րում գոհացուցիչ տեղեկութիւններ կը տրուին դԶեռա-
գրաց.— Խնամովկ և նախանձելի համբերութեամբ ԶԶ-աց
համեմատութիւնք և բիւրաւոր պէսպէս ընթերցուածոց
քաղուածք իւրաքանչիւրն յատուկ արձանա-
գրուած յայտարարութեամբ Քրչագրին, և ոչ խառն ի
խուռն և վեր ի վերոյ, ինչպէս է ի Վ.Ա. յիրեան 663—671
իբր «Այլ ընթերցուածք կարեսրք», և յիրեան 661—662
իբր «Ճանօթութիւնք». — Սուրբ Գրոց վկայութեամց
տեղիներն նշանակուած, թէպէտ և կան ինչ ինչ ան-
տեսութիւնք և անճշութիւնք.— ազնիւ թուղթ, մա-
քուր տպագրութիւն գեղեցկատառ. — գրեթէ 600 երես
ըովանդակող ստուար հատորի մէջ՝ սոսկ 60 իւ չափ
Ուղղելիք և Վրիպակք, որոնցմէ 33 միայն նշմարուած-
ին ի վերջին երես գրոցն. միով բանիւ, հոգածութեամբ
և խղճմտութեամբ կատարուած աշխատութիւն:

* * * * *

Զանց կ'ընկմ խօսիլ զուղղագրութենէ մատենին,
և զիիտագրութենէն՝ որ յաճախ տարօրինակ թուեցաւ
ինձ, (բութ՝ փոխանակ ստորակիտի, ստորակէտ՝ փո-
խանակ բթի, վերջակէտ՝ փոխանակ ստորակիտի կամ
միջակիտի, ոչ ինչ կէտ՝ ուր հարկ էր դնել բութ կամ
ստորակէտ), և կանցնիմ ի համառօտ քննութիւն բնա-
գրին:

Նախնեաց որ և իցէ հին բնագիրը. յարդարելու
համար, բաց ի Զեռագրաց համեմատութենէն, անհրա-
ժեշտ կարեսր է լիովին ուսումնասիրել զայն՝ ստէպ
ստէպ կարգալով: Պէտք է միտ դնել մատենագրին գա-
րուն յորում կը գրէր, իւր գիտութեան աստիճանին,
ընդելական դարձուածներուն, բառերուն կազմութեանը,
քերականութեանը. միտ դնել այն բառերուն և ասա-
ցուածներուն՝ որ մերթ այս կերպ գրուած են, մերթ
այն կերպ, և նորին իսկ մատենագրին օգնութեամբ՝

ասու սխալ գրուածը՝ սրբազնել անդ ուղիղ գրուածով.
միտ դնել մատենագրին նա և ուրիշ գրուածոց և թարգ-
մանութեանց՝ եթէ ունի, և իւր ժամանակակից այլ մա-
տենագրութեանց՝ որ փոխադարձաբար կը լուսաւորին
կը պարզեն, կը հաստատեն կամ կ'ուղղեն մէկզմէկ,
նոյնպէս և այն յետագայ մատենագրութեանց՝ յորս կը
դանուին փոխասութիւնք ի նոյն մատենագրէն։ Սովին
ոճով ուսումնասիրեալ և յարդարեալ բնագրի հրատա-
րակութիւնն կը կոչուի Քննական Հրատարակութիւն։

Տ-ի մէջ այսպիսի ուսումնասիրութեան թերակա-
տար ըլալուն պատճառաւ յոլով ուրեք Ռոկեդարու-
գրուածն Յետուկեղարեան գրուածի դարձած է, ուրեք
Ստորին Հայերէնի կերպարանք առած, այլուր մեր սո-
վորական աշխարհաբարին, տեղ մըն ալ այժմու աշ-
խարհաբարեանց ոմանց նորելուկ Հայերէնին։ Շատ և
շատ անգամ սիալն և անվաւերն ընտրուած է, ուղիղն
և վաւերականն ծանօթութեանց մէջ նետուած։ Կար-
ծեցեալ ուղղութիւններով այլայլած է բնագիրն, մինչ-
դեռ ակնյայտնի սխալներ, 100-իւ չափ, անփոփոխ
մնացած են։ Ընդ մեծ և լնդ փոքր՝ 500 փոփոխելիք և
ուղղելիք կան Ազաթանգեղոսի վեցերորդ տպագրու-
թեանս մէջ։ Հարկ է որ առ այժմ քանի մի օրինակ-
ներով միայն շատանամ։

Նորայր Ն. Բիոզանդացի



«Ազգային գրադարան»



NL0412603

enriched by the addition of a few small pieces of gold
and silver. The author of the book is unknown, but it is
believed to be a copy of the original manuscript of the
Book of Hours of King Edward IV, which was written
in the year 1467. The book contains 100 folios and
is bound in a dark brown leather cover. The title page
is inscribed with the name of the owner, 'The Royal
Library of King Edward IV'. The book is in excellent
condition and is a valuable historical document.

Henry VIII

8153